

տուած է իր հակումը դէպի հայոց հին մոլորութիւնները, ուստի կրնայ մեծ խոչընդոտ մ'ըլլալ կրօնական միութեան, որուն համար այնքան ջանք թափած է Ս. Աթոռը. եւ կը յարէ. Վարդանովիչի յանցանքը այնչափ ալ թեթեւ չէ, որովհետեւ ան անարդած է Առաքելական Աթոռը դիմելով Պատրիարքին տիրանալու համար Արքեպիսկոպոսութեան. անարդած է թագաւորը, որ իր իրաւունքը կը նկատէր Եպիսկոպոսի անուանումը. անարդած է Թորոսովիչ Արքեպիսկոպոսը, որուն հաւանութիւնը չէր խնդրուած, անարդած է Ազգը, որ կը պահանջէ մասնակցիլ Եպիսկոպոսական ընտրութեան ... Ուստի պէտք չէ խիստ նկատուի Վարդանովիչի հեռացումը Լեհաստանէն (25) :

Փոխ-գիւանապետը կ'ընդդիմաբանէ ըսելով՝ թէ Պատրիարքը լիովի իրաւունք ունէր հոգ տանելու Լէոպոլսոյ Արքեպիսկոսութեան՝ հնամենի եւ տակաւին ի զօրու եղող սովորութեան համաձայն. ուստի հայերը պարտէին ազատ ըլլալ յարելու իրենց Պատրիարքին եւ անկէ ընդունելու օգնական Եպիսկոպոսը (26) :

Առաքելական Նուիրակը կը պատասխանէ՝ թէ ճիշդ է որ առաջ Պատրիարքը կը միջամտէր Արքեպիսկոպոսութեան մասին, սակայն այժմ կացութիւնը բոլորովին փոխուած է, որովհետեւ թեմը կաթողիկէ եղած է : Եւ կը յաւելու. «Հայ Պատրիարքը կամ կաթո-